

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-----2015 թվականի N----Ն

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների գնահատման և հատուցման ընթացակարգը:

2. Տնտեսական վնասի հաշվարկման և հատուցման հիմքում դրված են բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի դեգրադացիայի տնտեսական արժեքի գնահատման գծով Հայաստանի Հանրապետությունում և միջազգային պրակտիկայում ընդունված գնահատման մեթոդները:

3. Անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեությունների դեպքում կիրառվում են տնտեսական վնասի գնահատման և հատուցման միջազգային պրակտիկայում ընդունված այլ մեթոդներ:

4. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

ա) տնտեսական գործունեություն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նախագծային փաստաթղթերով ներկայացված նախատեսվող գործունեություն:

բ) տնտեսական վնաս՝ տնտեսական գործունեության հետևանքով (արդյունքում) շրջակա միջավայրին պատճառվող վնասների հանրագումարը՝ դրամական արտահայտությամբ:

գ) հատուցում՝ շրջակա միջավայրին հասցվելիք վնասների հատուցման հանրագումարը՝ դրամական արտահայտությամբ:

II. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների:

6. Տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ԶԱԳ + ՕԱԳ$$

որտեղ՝

ՎՏ - տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ - հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աքաղաղում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է,

որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 21-ի «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N92-Ն որոշման համաձայն.

ՋԱԳ - ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով (ջրային ռեսուրս վնասակար նյութերի արտահոսք, աղտոտող նյութերի քանակություն, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակ, ազդեցության ժամանակահատվածը, վնասակար նյութերի ազդեցության և գերնորմատիվային ջրօգտագործում, մաքրման կայանների սարքավորումների խափանում և անարդյունավետ աշխատանք) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ սահմանված «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին »- N 1110-Ն որոշման համաձայն.

ՕԱԳ - մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով (ամրակայված և շարժական աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների գերազանցում, նախատեսված պահանջների և այլ նորմերի խախտում) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2005 թվականի հունվարի 25-ի «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 91-Ն որոշման համաձայն.

7. Տնտեսական վնասի հաշվարկները իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում:

8. Տնտեսական վնասի հաշվարկները կիրառվում են այլընտրանքային տարբերակների համեմատական բնութագրերի և ընտրված տարբերակի հիմնավորման մեջ:

9. Տնտեսական վնասի հաշվարկները ներառվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) հաշվետվությունում:

II. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցումը ներառում է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վնասված բաղադրիչների հատուցման վճարները:

11. Հատուցվող վճարներն հաշվարկվում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշման համաձայն:

12. Հատուցման վճարները ներառվում են նախագծի նախահաշվում, ՇՄԱԳ հաշվետվությունում և ենթակա են վճարման օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման նպատակը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջի կատարումն է, որը միտված է շրջակա միջավայրին հասցվելիք վնասի և դրա հատուցման հաշվարկման հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ: Որոշման ընդունումը կապահովի նախատեսվող գործունեության նախնական՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում իրականացնելու փուլում, տնտեսական վնասի հաշվարկմանը և հատուցման գործընթացի կանոնակարգումը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը կնպաստի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում տնտեսապես առավել արդյունավետ տարբերակի ընտրմանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատուցման հաշվարկմանը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

«Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակիցների կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

«Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը կնպաստի նախատեսվող գործունեությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, և փորձաքննական գործընթացներում տնտեսապես առավել արդյունավետ տարբերակի ընտրմանը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատուցման հաշվարկմանը, ինչն էլ կնպաստի փորձաքննության գործընթացում ճիշտ որոշումների կայացմանը և ձեռնարկողի կողմից արդյունավետ տարբերակի ընտրմանը: